

«Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական
մանկավարժական ինստիտուտ» ՊՈԱԿ

**ԳՊՄԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ
(2015 - 2019)**

Գյումրի -2014

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.	ԳՊՄԻ-Ի ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԵՍԼԱԿԱՆԸ	3
2.	ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	5
3.	ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ	7
4.	ՈՒՍԱՆՈՂՆԵՐ	9
5.	ՊՐՈՑԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄ	11
6.	ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ	13
7.	ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ	15
8.	ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ	16
9.	ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ	17
10.	ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆԵՐՔԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ	19

1. Գ Պ Մ Ի Ա Ռ Ա Ք Ե Լ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ը

Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտը կրթական, գիտական և մշակութային հաստատություն է, որի առաքելությունն ազգային աշխատաշուկայի պահանջներին համապատասխան կարողություններով և անհրաժեշտ գիտելիքներով օժտված մասնագետների պատրաստումն է բակալավրի, մագիստրոսի և հետազոտողի որակավորումներով՝ մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման միջոցով:

ԳՊՄԻ-ի գործունեությունն միտված է իր առաքելությունից բխող հետևյալ նպատակներին.

1. ձևավորել ուսանողակենտրոն միջավայր, որակի և սովորելու մշակույթ՝ մասնագիտության կրթական ծրագրերի (ՄԿԾ) մրցունակության ու որակավորումների համադրելիության ապահովման, արտաքին հարավոփոխ միջավայրի մարտահրավերներին դիմակայելու համար,
2. ձևավորել մշակույթ՝ գիտահետազոտական աշխատանքների իրականացման, շրջանավարտներին աշխատանքային կարիերային նախապատրաստելու և գիտելիքահենք հասարակությանն ինտեգրելու համար,
3. ձևավորել արտաքին և ներքին շահակիցների հետ մասնակցային համագործակցության և հաշվետվողականության մշակույթ՝ նպաստելով հասարակությանը մատուցվող կրթական և այլ ծառայությունների թափանցիկությանը:

Գ Պ Մ Ի Տ Ե Ս Լ Ա Կ Ա Ն Ը

1. Դառնալ աշխատաշուկայի պահանջներին համահունչ կրթական ծառայություններ մատուցող ժամանակակից մրցունակ ուսումնական, գիտահետազոտական ու մարզամշակութային հաստատություն, որը կկարողանա համադրել ինչպես ուսուցման ավանդական մեթոդների վերանայված ու լրամշակված տարբերակները, այնպես էլ ժամանակակից կրթական տեխնոլոգիաների, դասավանդման մեթոդիկաների, նորաստեղծության /իննովացիոն/ հնարավորությունները՝ կիրառելով ու շարունակաբար զարգացնելով կրթության ու դաստիարակության արդիական մեթոդները:
2. Դառնալ «սովորող կազմակերպություն», որի գործունեության բոլոր ոլորտներում կարևորվում է հարատև սովորելու միջավայրի առկայության և որակի մշակույթի ձևավորման ու շարունակական զարգացման անհրաժեշտությունը:
3. Շիրակի մարզի, Գյումրի քաղաքի գիտակրթական, մարզամշակութային և սոցիալ-տնտեսական ոլորտներում, ինչպես նաև քաղաքացիական հասարակության ձևավորման գործընթացում տարածքային ու տեղական ինքնակառավարման կառույցների հետ սոցիալական գործընկերության միջոցով դառնալ յուրատեսակ «համայնքային կենտրոն»:
4. Դառնալ հաստատություն, որի գործունեությունը միտված է եվրոպական կրթական համակարգին ինտեգրմանը և գիտակրթական համակարգի միջազգայնացմանը:

2. Կ Ա Ռ Ա Վ Ա Ր ՈՒ Մ ԵՎ Վ Ա Ր Չ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՆՊԱՏԱԿԸ

ԳՊՄԻ-ի առաքելությանը համապատասխան արդյունավետ գործունեություն ծավալող, անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներով ապահովված կառավարման համակարգի բարելավում ու զարգացում:

ԽՆԴԻՐՆԵՐԸ՝

1. կառավարման համակարգի և վարչական կառույցների գործունեությանը վերաբերող կանոնակարգերի և աշխատակարգերի արդյունավետության գնահատում, վերանայում և բարելավում,
2. կառավարման համակարգի և վարչական կառույցների ղեկավարների աշխատանքների իրականացման արդյունավետության պարբերական հաշվետվողականության ապահովում և գնահատում,
3. մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների ապահովման և տնօրինման քաղաքականության մշակում, պարբերաբար վերանայում և բարելավում:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԵՆԹԱԴՐՈՒՄ Է.

- 1.1. օպտիմալացնել կառավարման համակարգը՝ ԳՊՄԻ-ի ռազմավարական նպատակներին համապատասխան, լրամշակել կառուցվածքային ստորաբաժանումների ցանկը՝ ըստ ենթակայության,
- 1.2. մշակել կառավարման համակարգի և վարչական կառույցների կանոնակարգերի և աշխատակարգերի մշտադիտարկման, վերանայման և բարելավման մեխանիզմներ ու ընթացակարգեր,
- 1.3. մշտադիտարկել կառավարման համակարգի կանոնակարգերն ու աշխատակարգերը շահառուների կողմից,
- 1.4. լրամշակել կառավարման համակարգի և վարչական կառույցների կանոնակարգերը,

- 2.1. լրամշակել կառավարման համակարգի և վարչական կառույցների ղեկավարների պարբերական հաշվետվողականության ընթացակարգ,
- 2.2. լրամշակել կառավարման համակարգի և վարչական կառույցների ղեկավարների աշխատանքների պարբերական հաշվետվողականության գնահատման մեխանիզմները և գործիքները,
- 3.1. մշակել մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների տնօրինման արդյունավետությունը և հրապարակայնությունը ապահովող մշտադիտարկման մեխանիզմներ և ընթացակարգեր,
- 3.2. մշակել ԳՊՄԻ-ի ֆինանսական գործունեության աուդիտի կազմակերպման ձևերի, մեթոդների ու արդյունքների ամփոփման կանոնակարգեր:

3. Մ Ա Ս Ն Ա Գ Ի Տ ՈՒ Թ Յ Ա Ն Կ Ր Թ Ա Կ Ա Ն Ծ Ր Ա Գ Ր Ե Ր ՆՊԱՏԱԿԸ

Որակի ապահովման ազգային շրջանակին և ԳՊՄԻ-ի առաքելությանը համահունչ, աշխատաշուկայի պահանջներին բավարարող, շարժունությանը և միջազգայնացմանը նպաստող ճկուն ՄԿԾ-ների իրականացում:

ԽՆԴԻՐՆԵՐԸ՝

1. ուսանողակենտրոն կրթական համակարգ ձևավորելու նպատակով յուրաքանչյուր ՄԿԾ-ից ակնկալվող վերջնարդյունքներին հասնելու դասավանդման և ուսումնառության մեթոդների բարելավում,
2. ուսումնառության արդյունքների ձևավորմանը նպաստող գիտելիքների գնահատման և ակադեմիական ազնվության ապահովում,
3. առաջավոր փորձի համեմատական վերլուծության (բեչմարքինգի) միջոցով ՄԿԾ-ների բովանդակային համադրելիության և ակադեմիական շարժունության ապահովում,
4. փոփոխվող կրթական միջավայրի և աշխատաշուկայի պահանջներին համահունչ ՄԿԾ-ների մշտադիտարկման, արդյունավետության գնահատման և բարելավման ապահովում,
5. աշխատաշուկայի պահանջներին համապատասխան նոր ՄԿԾ-ների մշակում:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԵՆԹԱԴՐՈՒՄ Է.

- 1.1. մշակել ՄԿԾ-ների վերջնարդյունքներին հասնելու դասավանդման և ուսումնառության մեթոդների արդիականացմանը միտված քաղաքականություն և ընթացակարգեր,
- 1.2. ապահովել ՄԿԾ-ների իրականացման համար անհրաժեշտ պատրաստվածությամբ և մասնագիտական որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական կազմ՝ դասախոսակենտրոն համակարգից լրարժեք ուսանողակենտրոն համակարգի անցման,

- 2.1. մշակել ուսումնասրության արդյունքների ձևավորմանը նպաստող գիտելիքների գնահատման քաղաքականություն և ընթացակարգ,
- 2.2. մշակել ակադեմիական ազնվության ապահովման քաղաքականություն և ընթացակարգ,
- 2.3. մշակել, կիրառել և բարելավել մնացորդային գիտելիքների ստուգման ընթացակարգը,
- 3.1. ուսումնասիրել առաջավոր բուհերի ՄԿԾ-ները, համադրելիությունը բուհի ՄԿԾ-ներին, վերհանել խնդիրները և վերանայել ՄԿԾ-ները,
- 3.2. ստեղծել նախապայմաններ աշխատաշուկայի և արտաքին շահակիցների պահանջներին համահունչ որոշ ՄԿԾ-ների՝ օտարալեզու ուսուցում իրականացնելու համար,
- 3.3. ներկայացնել ծրագրային հավատարմագրման առնվազն երեք ՄԿԾ-ներ:
- 4.1. մշակել, ներդնել և բարելավել փոփոխվող կրթական միջավայրի և աշխատաշուկայի պահանջներին համահունչ ՄԿԾ-ների արդյունավետության գնահատման, վերանայման և բարելավման քաղաքականություն և ընթացակարգ,
- 4.2. մշակել, կիրառել և բարելավել ՄԿԾ-երի որակի մշտադիտարկման, գնահատման ու պարբերաբար վերանայման ընթացակարգեր և մեխանիզմներ,
- 5.1. ուսումնասիրել տարածաշրջանի աշխատաշուկան՝ վերհանելով պահանջարկը՝ ըստ մասնագիտացումների,
- 5.2. դուրս գալով աշխատաշուկայի պահանջներից՝ ներկայացնել նոր ՄԿԾ-ների իրականացման նախագծեր:

4. ՈՒՍԱՆՈՂՆԵՐ

ՆՊԱՏԱԿԸ

Կրթական միջավայրի բարելավում՝ ուսանողներին համապատասխան աջակցության տրամադրելու նպատակով:

ԽՆԴԻՐՆԵՐԸ՝

1. ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության մեխանիզմների բարելավում,
2. ուսանողների կրթական կարիքների վերհանման մեխանիզմների բարելավում,
3. ուսանողների արդյունավետ ուսումնառությանն նպաստելու նպատակով լրացուցիչ ծառայությունների տրամադրում,
4. ուսանողների կարիերային նպաստող ծառայությունների բարելավում,
5. ուսանողների գիտահետազոտական հմտությունների և կարողությունների ձևավորման համար կրթական նպաստավոր միջավայրի ստեղծում,

ՈՒՋՄԱՎԱՐԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԵՆԹԱԴՐՈՒՄ Է.

- 1.1. իրականացնել բակալավրական և մագիստրոսական կրթական ծրագրերի ուղղությամբ մասնագիտական կողմորոշում,
- 1.2. բուհի հավանական դիմորդներին լրացուցիչ ուսումնական ծառայությունների մատուցում
- 1.3. մագիստրատուրայի ընդունելության մեխանիզմների բարելավում,
- 2.1. լրամշակել ուսանողի կրթական կարիքների վերհանման ընթացակարգերը,
- 2.2. լրամշակել ուսանողների կրթական կարիքների վերհանման մեխանիզմները և գործիքակազմը,
- 3.1. լրամշակել ուսանողի ուղեցույցը (E-learning),
- 3.2. մշակել լրացուցիչ խորհրդատվական պարապմունքների բարելավման մեխանիզմները,

- 4.1. աշխատաշուկայի պահանջներից դուրս գալով վերհանել ավարտական կուրսերի ուսանողների կարիքները կարիերային նպաստելու նպատակով,
- 4.2. կազմակերպել ուսանողի կարիերային նպաստող ոչ ֆորմալ դասընթացներ և վերապատրաստումներ՝ դուրս գալով աշխատաշուկայի պահանջներից,
- 5.1. ուսանողական գիտաժողովների կազմակերպում, նյութերի ժողովածուի տպագրում,
- 5.2. մշակել և կիրառել հանրապետական և միջազգային գիտաժողովներին ուսանողների մասնակցության խրախուսման ընթացակարգ:

**5. Պ Ր Ո Ֆ Ե Ս Ո Ր Ա Դ Ա Ս Ա Խ Ո Ս Ա Կ Ա Ն Ե Վ
Ո Ւ Ս Ո Ւ Մ Ն Ա Օ Ժ Ա Ն Դ Ա Կ Կ Ա Ջ Մ
Ն Պ Ա Տ Ա Կ Ը**

ՄԿԾ-ների իրականացման համար անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով ապահովվում:

ԽՆԴԻՐՆԵՐԸ՝

1. արտաքին և ներքին միջավայրի փոփոխվող պայմաններին համապատասխան պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի աշխատանքի ընդունման և ազատման քաղաքականության և ընթացակարգերի շարունակական վերանայում և բարելավում,
2. յուրաքանչյուր ՄԿԾ-ի արդյունավետ իրականացման համար դասախոսական կազմին ներկայացվող պահանջների ու չափանիշների սահմանում,
3. պրոֆեսորադասախոսական կազմի պարբերաբար գնահատման մեխանիզմների բարելավում:

Ո Ա Ջ Մ Ա Վ Ա Ր Ո Ւ Թ Յ Ա Ն Ի Ր Ա Կ Ա Ն Ա Ց Ո Ւ Մ Ը Ե Ն Թ Ա Դ Ր Ո Ւ Մ Է .

- 1.1. ստեղծել պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի աշխատանքի ընդունման և ազատման քաղաքականության և ընթացակարգերի շարունակական վերանայման և բարելավման մեխանիզմներ,
- 1.2. վերանայել և բարելավել ԲՈՒՀ-ում իրականացվող ՄԿԾ-ների չափանիշներին համապատասխան պրոֆեսորադասախոսական կազմի և ուսումնաօժանդակ կազմի տարակարգերի և պաշտոնների տեղակալման ու առաջընթացի չափանիշները,
- 1.3. մշակել և կիրառել պրոֆեսորադասախոսական կազմի կայունությունն ապահովող մեխանիզմներ՝ պարբերաբար բարելավելով ՊԴ և ՈւՕ կազմի սոցիալական վիճակը:

- 2.1. մշակել պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն և ընթացակարգ,
- 2.2. մշակել և կիրառել սկսնակ դասավանդողների մենթորության քաղաքականություն և ընթացակարգ,
- 2.3. մշակել, կիրառել և բարելավել դասախոսների մասնագիտական վերապատրաստման մեխանիզմներ,
- 3.1. Մշակել, կիրառել և բարելավել վարչական, ուսումնաօժանդակ կազմի գործունեության որակի ապահովման ընթացակարգ և մեխանիզմներ,
- 3.2. Մշակել, կիրառել և բարելավել ՊԴ կազմի տարակարգի շնորհման քաղաքականություն և ընթացակարգ:

6. Հ Ե Տ Ա Ձ Ո Տ ՈՒ Թ Յ ՈՒ Ն ԵՎ Չ Ա Ր Գ Ա Ց ՈՒ Մ

ՆՊԱՏԱԿԸ

Հետազոտական գործունեության միջազգայնացման և ուսումնառության հետ կապի ապահովում:

ԽՆԴԻՐՆԵՐԸ՝

1. երկարաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ գործունեության պլանավորմամբ հետազոտությունների իրականացման և զարգացման ապահովում,
2. կրթական և գիտական գործընթացների արդյունավետ փոխկապակցվածության ապահովում,
3. հետազոտական աշխատանքների միջազգայնացման կարգավորում և խթանում,
4. գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար նյութատեխնիկական և ֆինանսական միջոցների ապահովում:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԵՆԹԱԴՐՈՒՄ Է.

- 1.1. մշակել և պլանավորել առաջիկա 5 տարիների համար (երկարաժամկետ) բուհում իրականացվելիք հետազոտությունների ուղղությունները և այդ ոլորտներում իր հետաքրքրությունները՝ ըստ ամբիոնների կողմից ներկայացրած ծրագրերի,
- 1.2. հետազոտության ոլորտում բուհի հետաքրքրությունների և հավակնությունների երկարաժամկետ ռազմավարության հիման վրա մշակել և ներդնել հետազոտությունների միջնաժամկետ (3 տարվա համար) և կարճաժամկետ (1-2 տարվա համար) կոնկրետ ծրագրեր,
- 2.1. մշակել և ներդնել հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցվածության քաղաքականություն, ընթացակարգեր և մեթոդներ,

- 3.1. մշակել և ներդնել հետազոտական աշխատանքների արդյունքների վավերացման մեխանիզմներ,
- 3.2. մշակել հստակ մեխանիզմներ հետազոտությունների իրականացման բարենպաստ պայմաններ ստեղծելու համար,
- 3.3. բարելավել երիտասարդ աշխատակազմի հետազոտական գործունեությունը խրախուսելու քաղաքականությունն ու ընթացակարգերը,
- 3.4. մշակել, ներդնել և բարելավել ակադեմիական ազնվությունը երաշխավորող և գրագողությունը կանխարգելող քաղաքականությունն ու ընթացակարգեր,
- 3.5. ստեղծել, ներդնել և բարելավել միջազգային հետազոտական նախաձեռնություններում ուսումնառողների և դասավանդողների ներգրավվածությունը խրախուսող կանոնակարգեր,
- 3.6. մշակել և կիրառել ԱՊՀ երկրներում և օտարերկրյա միջազգային գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների կարգավորման մեխանիզմներ,
- 4.1. իրականացնել բուհի գիտահետազոտական աշխատանքների առաջնահերթությունների հիման վրա բյուջեի միջոցների համապատասխան հատկացումներ
- 4.2. ապահովել համապատասխան նյութատեխնիկական բազա՝ դուրս գալով գիտահետազոտական աշխատանքների առաջնահերթություններից:

7. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

ՆՊԱՏԱԿԸ

Արդյունավետ գործունեության իրականացման նպատակով համապատասխան ենթակառուցվածքների և ռեսուրսների մշտադիտարկում և բարելավում:

ԽՆԴԻՐՆԵՐԸ՝

1. բուհում իրականացվող մասնագիտությունների կրթական ծրագրերի պահանջներին համապատասխան ուսումնական ու աշխատանքային միջավայրի շարունակական բարելավում,
2. ուսումնական, գիտական և մյուս ռազմավարական ուղղություններով արդյունավետ գործունեության իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների ապահովում,
3. առողջության և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների բարելավում:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԵՆԹԱԴՐՈՒՄ Է.

- 1.1. կատարել հաստատության մասնաշենքերի, լաբորատորիաների, գրադարանի, ուսումնական կաբինետների, արհեստանոցների և արվեստանոցների օգտագործման նպատակների իրականացման համար ռեսուրսների ապահովվածության վերլուծություն, մշակել դրանց արդյունավետության և հասանելիության գնահատման մեխանիզմներ և բարելավմանն ուղղված միջոցառումներ,
- 1.2. բարելավել տեղեկատվության և փաստաթղթաշրջանառության գործընթացների կառավարման մեխանիզմները,
- 2.1. բարելավել հաստատության կրթական նպատակների իրականացման համար ֆինանսական միջոցները կառավարելու և դրանք նպատակին բաշխելու մեխանիզմները,
- 3.1. հստակեցնել առողջության և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայություններն ապահովող աշխատակիցների աշխատանքային նկարագրերը:

8. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆ ԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՆՊԱՏԱԿԸ

Տրամադրած կրթության, իրականացրած հետազոտությունների և օգտգործած ռեսուրսների համար պետության ու հասարակության առջև հաշվետվողականություն:

ԽՆԴԻՐՆԵՐԸ՝

1. շահակիցների առջև հաշվետվողականության ապահովման մեխանիզմների բարելավում,
2. հասարակության հետ արդյունավետ հետադարձ կապի ձևավորում,
3. բուհում գործող ընթացակարգերի ու գործընթացների թափանցիկության և հասարակությանը հասանելիության մշտադիտարկում և բարելավում,
4. հասարակությանը լրացուցիչ գիտելիքների (արժեքների) և խորհրդատվական ծառայությունների փոխանցման մեխանիզմների բարելավում:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԵՆԹԱԴՐՈՒՄ Է.

- 1.1. մշակել և ներդնել շահակիցների առջև հաշվետվողականության մշտադիտարկման ընթացակարգեր և բարելավման մեխանիզմներ,
- 2.1. մշակել և ներդնել հասարակության հետ արդյունավետ հետադարձ կապի հաստատման քաղաքականություն և ընթացակարգ,
- 3.1. բարելավել բուհի հաշվետվողականության թափանցիկությունն ապահովող մեխանիզմները,
- 4.1. մշտադիտարկել և բարելավել հասարակությանը լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունների իրականացման ընթացակարգերը,
- 4.2. ստեղծել և կիրառել հասարակությանը մատուցվող լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունների ներքին և արտաքին գնահատման գործիքներ:

9. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆ ԱՑՆԱՑՈՒՄ ՆՊԱՏԱԿԸ

Արտաքին կապերի համակողմանի զարգացմանը, փորձի փոխանակմանը և ինստիտուտի միջազգայնացմանը նպաստող գործունեության ապահովում:

ԽՆԴԻՐՆԵՐԸ՝

1. արտաքին կապերին, փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող միջավայրի ստեղծում,
2. արտաքին կապերի կանոնակարգված գործընթացի ապահովում,
3. տեղական և միջազգային հաստատությունների ու կառույցների հետ բուհի արդյունավետ համագործակցության ապահովում:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԵՆԹԱԴՐՈՒՄ Է.

- 1.1. բարելավել արտաքին կապերին և միջազգայնացմանը նպաստող ընթացակարգերը և մեխանիզմները,
- 1.2. բարելավել ուսումնառողների և դասավանդողների օտար լեզուների մասնագիտական մակարդակի իմացությանը նպաստող մեխանիզմները՝ ապահովելով ներքին շահակիցներին օտար լեզվի իմացության անհրաժեշտ մակարդակով,
- 1.3. մշակել և ներդնել որոշ Մասագիտական կրթական ծրագրերում օտարերկրյա ուսումնառողներին առաջարկվող օտար լեզուներով դասընթացներ,
- 2.1. վերանայել և բարելավել արտաքին կապերի բաժնի գործունեությունը կարգավորող ընթացակարգերը,
- 2.2. մշակել և ներդնել արտաքին կապերի բաժնի որակի ապահովման քաղաքականություն և ընթացակարգեր,
- 3.1. ընդլայնել համագործակցության շրջանակները համադրելի առաջատար բուհերի հետ:

10. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆԵՐՔԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՆՊԱՏԱԿԸ

Բուհի բոլոր գործընթացների շարունակական բարելավմանն ու որակի մշակույթի ձևավորմանն ապահովում:

ԽՆԴԻՐՆԵՐԸ`

1. որակի ապահովման ներքին համակարգի գործունեության արդյունավետության ապահովում,
2. որակի ներքին ապահովման գործընթացների համար մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների արդյունավետ օգտագործում,
3. որակի ապահովման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության ընդլայնում,
4. որակի ապահովման ներքին համակարգի պարբերաբար վերանայում,
5. որակի ապահովման արտաքին գնահատման գործընթացների համար բավարար հիմքերի ստեղծում,
6. բուհի գործընթացների որակի մասին տեղեկատվության թափանցիկության ապահովում:

ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԵՆԹԱԴՐՈՒՄ Է.

- 1.1. մշակել և կիրառել որակի ապահովման ներքին համակարգի գործունեության արդյունավետության գնահատման ընթացակարգեր և մեխանիզմներ,
- 2.1. վերանայել և բարելավել որակի ապահովման գործընթացներում մարդկային ռեսուրսների ներգրավվածության, ֆինանսական և նյութական ռեսուրսների բաշխման մեխանիզմները,
- 3.1. բարելավել որակի ապահովման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների տեղեկացվածությունն ու ներգրավվածությունն ապահովող մեխանիզմները,

- 4.1. ստեղծել և կիրառել որակի ապահովման ներքին համակարգի պարբերաբար վերանայման քաղաքականություն, ընթացակարգեր, մեխանիզմներ ու գործիքակազմ,
- 5.1. պատրաստել տարեկան ինքնավերլուծություններ և հաշվետվություններ՝ ըստ ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշների և չափորոշիչների՝ բավարար հիմքեր ստեղծելով արտաքին գնահատման գործընթացների համար,
- 6.1. մշակել և իրականացնել բուհի գործունեության որակի վերաբերյալ շահակիցներին տեղեկացվածությունն ապահովող մեխանիզմներ:

Հ Ա Մ Ա Կ Ա Ր Գ Ո Ղ

ԳՊՄԻ-ի ռեկտոր Վարդևան Գրիգորյան

Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք Ա Յ Ի Ն Խ ՈՒ Մ Բ

1. Անահիտ Ֆարմանյան Գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր (խմբի ղեկավար)
2. Սամվել Սարգսյան Բարձրագույն մաթեմատիկայի, մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ
3. Ելենա Վարդանյան Պատմության, իրավագիտության և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոնի վարիչ
4. Հենրիկ Դրմեյան Ֆիզիկայի և նրա դասավանդման ամբիոնի վարիչ
5. Նազելի Ավետիսյան Որակի ապահովման կենտրոնի տնօրեն
6. Ռուզաննա Մարդոյան Մանկավարժության ֆակուլտետի ղեկան
7. Թամարա Մելիքյան Օտար լեզուների ֆակուլտետի ղեկան
8. Լևոն Մարտիրոսյան Աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ
9. Ասյա Հարությունյան Գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտորի օգնական
10. Բենիկ Վարդանյան Մագիստրոս
11. Գագիկ Կարապետյան Գյումրու թիվ 7 դպրոցի տնօրեն
12. Հովիկ Պետրոսյան Գյումրու թիվ 2 դպրոցի տնօրեն